Ռ. Տ. ՏԻՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕԶՆԵՑՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Մի առիթով մենք անդրադարձել ենք XIX դարի պատմագիր Վարդան Օձնեցու «Անցք Վարդան Արքեպիսկոպոսի Օձնեցւոյ և ճանապարհորդութիւն նորա ի Հայաստան ի Տաճկաստան և ի Կիլիկիայ» ձեռագիր աշխատությանը[1], որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 8822 թվահամարի տակ։

Պատմության համար պակաս հետաքրքրություն չի ներկայացնում միևնույն ձեռագրում զետեղված և դարձյալ Օձնեցու գրչին պատկանող փոքրածավալ մի այլ աշխատություն ևս, որ կրում է «Յաղագս պատճառանաց բացման պատերազմին ռուսաց ընդ օսմանցիս» խորագիրը։ Սույն աշխատությունը, հավանարար, սկիզբն է ավելի ծավալուն մի ուսումնասիրության, որ նախատեսել է գրել հեղինակը 1853—1856 թվականների ռուս-տաճկական պատերազմի մասին։

Վերնագրին հաջորդող «գլուխ Ա» և ապա «գլուխ Բ» նշումները (երկրորդ գլուխը չի շարադրված) հիմք են տալիս ասելու, թե մեզ հասած հատվածը ծրագրված աշխատության առաջին գլուխն է։ Վարդան Օձնեցին վերը նշված երկու աշխատություններում իբրև ականատես պատմագիր, անդրադարձել է Ղրիմի պատերազմի կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած գործողություններին։ Նա թողել է ուշագրավ տեղեկություններ ոչ միայն Ղրիմի պատերազմի հետ կապված բազմաթիվ դեպքերի, իր և ռուսական հրամանատարության փոխհարաբերությունների մասին, այլև կարևոր տեղեկություններ՝ օսմանյան կառավարության և եվրոպական տերությունների գործողությունների, արևմտահայության նկատմամբ կիրառվող պետական կեղծ ու պատիր բաղաքականության վերաբերյալ։

Մեր պատմագրության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե Ղրիմի պատերազմի պատմությունը թեև հիմնովին լուսաբանվել է արևմտաեվրոպական, նախասովետական ու սովետական գիտնականների կողմից, բայց համապատասխան չափով սպառիչ խոսք չի ասվել պատերազմի կովկասյան ռազմաճակատի և, մասնավորապես, այդ կռիվներին հայերի ունեցած մասնակցության մասին։ Սովետահայ պատմաբան Ա. Պողոսյանի այդ հարցին նվիրված ուսումնասիրությունը միայն մասամբ է լրացնում այս բացը[2]։ Այս առումով նշանակալի կշիռ են ստանում Օձնեցու տեղեկությունները Կարսի շրջանի ռազմական գործողությունների մասին։ Բնականաբար, Օձնեցին անդրադարձել է պատերազմի պատմության հետ կապված հանրահայտ փաստերին, խոսել պատմագրությանը հայտնի երևույթների մասին, սակայն, այդ փաստերը, մեր կարծիքով, հանրահայտ լինելով հանդերձ՝ դարձյալ հետաքրքրական են իբրև ականատես հե-

---

1 «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3։

2 Ա. Պողոսյան, Ղրիմի պատերազմի կովկասյան ռազմաճակատը և հայերի մասնակցությունը ռազմական գործողություններին, Երևան, 1950։

դինակի յուրովի ընկալումներ, որոնց միջոցով կրկին հավաստվում են պատմության բազմաթիվ մանրամասները։

Իր «Ճանապարհորդութիւն ի Հայաստուն ի Տաճկաստուն և ի Կիլիկիայ» ձեռագիր աշխատության մեջ, ինչպես ասվեց վերը, Օձնեցին թողել է ուշագրավ տեղեկություններ Ղրիմի պատերազմի կովկասյան ռազմաճակատի գործողությունների և իր ունեցած հարաբերությունների մասին Կովկասում գործող ռուսական բարձրաստիճան հրամանատարության հետ, հարաբերություններ, որոնք հավաստում են Օձնեցու ունեցած որոշակի ռուսական կողմնորոշման փաստը։

Պաշտոնի բերումով Վարդան Օձնեցին 1852 թ. ժամանում է Արևելյան Հայաստան, վերին Շիրակ, Բասեն, Կարս և անցնում հոգևոր պաշտոնյայի իր պարտականությունների կատարմանը։ Հոռոմոսի վանքում նա լսում է ռուս-տաճկական պատերազմը սկսվելու լուրը։ Կարս քաղաքում հանդիպում է Թիֆլիսի գավառապետին, որն այդտեղ էր ժամանել Արքունի գործով։ Վերջինս հանձն է առնում հաշտեցնել Վ. Օձնեցուն ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու հետ։ Օձնեցին գրում է մի մեղայական և հիշյալ պաշտոնյայի միջոցով ուղարկում Աշտարակեցուն։ Կաթողիկոսը անպատասխան է թողնում Օձնեցու գրությունը։ Երբ սկսվում է պատերազմը, նա լուրջ օգնություն է ցույց տալիս Ալեքսանդրապոլի հատվածում գտնվող ռուսական զորաբանակի հրամանատարությանը։ «Իսկ պատերազմն ռուսաց ընդ օսմանցւոց,— գրում է Օձնեցին,— սկսաւ շարունակիլ ի վախճան 1853 ամի։ Զորք օսմանցւոց գտեղի կալան ի քաղաքն Կարս իբրև 40 հազար և զօրք ռուսաց սակաւաթիւ. ընդ զնդապետին վրացի կնեազ Իլիայ զեներալին նախածանօթ բարեկամին իմոյ. որ արշաւէր ի սահմանագլուխ Ախուրեան գետոյ յԱղեքսանդրապոլ։ Եվ սկիզբն հոկտեմբեր ամսոյ հրատարակեաց պատերազմն Օսմանցին և Երդուեցան զօրքն ի Կարս, ապա արշաւ զօրաց իջաւ ի սահմանագլուխ իւրեանց յեզր Ախուրեան գետոյ, որ էր վանքն Հոռոմոսի (Ղոշավանք) և ես ի նմայ»[3]։

Ուշադրության արժանի է Օձնեցու նկարագրած ներքոհիշյալ դեպքը. Օձնեցին Ղոշավանքում գտնված ժամանակ ռուսական զորամասերի հրամանատարներից զնդապետ Իլիա բեկը նրա մոտ է ուղարկում ռուս հետախույզներ՝ տեղեկություններ իմանալու թուրքական բանակի զենքի ու զորքի քանակի մասին։ Ընթրիքից հետո Օձնեցին պատարագ է մատուցում՝ հանուն ռուսական զենքի հաղթանակի։ Հանկարծ հայտնվում են թուրքական սահմանապահ զինվորներ, որոնք դիմում են ուղիղ դեպի Հոռոմոսի (Ղոշավանք) վանքը։ Ահ ու սարսափ է տիրում Օձնեցուն. այնուամենայնիվ, նա իրեն չի կորցնում և գաղտնի ճանապարհով «արձակեցի զլրտեսքն ի սահմանս ռուսաց և ընկալա զպատապան զօրս օսմանեանց»։

Ստեղծված վտանգավոր դրությունից փրկվելու համար Օձնեցին որոշում է հեռանալ Հոռոմոսի վանքից մինչև պատերազմի ավարտը։ 1853 թ հոկտեմբերի 12-ին (հին տոմարով) Օձնեցին ուղևորվում է դեպի Պոլիս, սակայն ճանապարհները վտանգված էին և նա հազիվ է փրկվում մահից։ Տրապիզոնի լեռներում պատահում են թուրք կամավորների, որոնցից մեկը գազանարար հարձակվում է Օձնեցու վրա՝ սպանելու դիտավորությամբ։ Նրան փրկում է ուղեկիցը, որը Կարնո նախկին քաղաքագլուխն էր։ Ահա այդ ժամանակ

3 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 8822, էջ 196։

նա լսում է ռուսների և տաճիկների միջև տեղի ունեցած առաջին դինաբախման մասին և ականատես լինում ծովային ճակատամարտին։ Բերում ենք Օձնեցու նկարագրությունը ծովային ճակատամարտի մասին։

«Վերջապէս հասանք ի Տրապիզոն քաղաք, տարան զմեզ զամենեսին ի մաքրատանն (կարանտին), անդ լուաք սկիզբն կոտորածին, որ ի կարանտինն ռուսաց Սօխում Ղալէի և անդ տեսանք զերեքտասան պատերազմական նաւս, որք զորս հազար ծովային զօրօք երթային ի Ռուրիայի սահմանս, տանելով վասն նոցա վառօդ և զնդակս պատերազմի ապստամբեցուցանել ընդդեմ ռուսաց, սոքա յարեալ յանձնեցին նոցա և դարձան ի նաւահանգիստն Սինոպայ։ Իբրև ի ծածուկ։ Բայց լուեալ ռուսաց դայսպիին հետամուտ լինին նոցա մետասն նաւուք և ոչ հասանին, հազիւ ի լուսանալ առաւօտուն տեսանեն զնաւախումբն օսմանեանց դադարեալ ի նաւահանգստին Սինոպայ, զօրս անդէն կործանեցին զնդակաւ թնդանօթից, զմինն յորոց փախէալ զերծաւ ի նոցանէ վիրաւոր և տարաւ համբաւն զուժի կործանմանն, իսկ մեք յետ երկուց աւուրց այլ նաւաւ անցանք ի Սինոպ, տեսանք աչօք մերովք ի ծովու սուղեալքն»[5]։

1853 թ. նոյեմբերի 12-ին Օձնեցին ժամանում է Կոստանդնուպոլիս, որի նեղուցը, ինչպես գրում է նա, «պահէին 24 նաւուք անգղիացիք և գաղիացիք երեսուն հազար զօրօք». իսկ թե ինչ վիճակ էր տիրում տաճիկների մայրաքաղաքում, այդ մասին Օձնեցին գրում է. «Մայրաքաղաքն խռովեալ էր, մահմեդական խուժանն բնաջինջ առնել խոստանայր զքրիստոնեայս մայրաքաղաքին, եթէ ոչ նաւախումբն Անգղիոյ և Գաղիոյ ահարկաներ ի նոսա»[6]։

Երեք ամիս մնալով Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանում և տեսնելով, որ պատերազմը օրըստօրե սաստկանում է, Օձնեցին վնտրում է մի ավելի ապահով անկյուն։ Պատրիարքի համաձայնությամբ 1854 թ. փետրվարի 15-ին նա մեկնում է Սեբաստիայի Սուրբ Նշան վանքը։ Այստեղ մնում է մեկ տարի, ապա որոշում է վերադառնալ Արևելյան Հայաստան և ներումն խնդրել Հայոց կաթողիկոսից՝ իր անհնազանդության համար։ Պոլսի ազգային ժողովը Օձնեցուն խորհուրդ է տալիս մինչև պատերազմի ավարտը մնալ Կոստանդնուպոլսում, որովհետև դժվար էր անցնել ռուս-տաճկական սահմանը։ Բացի այդ, բարեկամները վախենում էին, թե օսմանյան կառավարությունը կարող էր նրան կասկածել լրտեսության մեջ «իբրև լրտես կասկածեսցէն առաքեալ»,—գրում է Օձնեցին։ Այնուհանդերձ, 1855 թ. մարտի 18-ին նա թողնում է Պոլիսը և նույն թվականի ապրիլի 3-ին հասնում Կարին։ Կարինում մնում է 6 ամիս։ Այդ ընթացքում իր անձի անձեռնմխելիությունն ապահովելու համար ձեռք է բերում պարսից հպատակի անձնագիրը։

Այդ օրերին ռուսական զորամասերը գտնվում էին Ալաշկերտում։ Օձնեցին աշխատում է անցնել ռուսական զորամասերի մոտ, սակայն Բասեն տանող ճանապարհին օսմանցիները նրան կասկածում են իբրև ռուսական լրտեսի, բանտարկում են և հանձնում Կարինում գտնվող օսմանյան զինվորական խորհրդին։ Օձնեցին դիմում է Կարինի Գրիգոր եպիսկոպոսին և վերջինիս երաշխավորությամբ ազատ արձակվում[7]։

---

4 Նույն տեղում, էջ 98։
5 Նույն տեղում։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում։

1855 թ. գարնանը վերսկսվում են պատերազմական գործողությունները թե՛ ծովում, և թե՛ ցամաքում։ Կովկասյան ռազմաճակատի գործողությունները կենտրոնանում են Կարսի շուրջը։ Այս կապակցությամբ Օձնեցին գրում է, որ այդ ժամանակ ռուսական բանակը պաշարել էր Կարսը, իսկ թուրքական ու նրա դաշնակիցների զորքերը պաշարել էին Սևաստոպոլը։ Երկուստեք նեղում էին Սևաստոպոլ ու Կարս քաղաքները։ Ֆրանսիացիները գրավում են Սևաստոպոլը, իսկ ռուսները պաշարում են Կարսն ու Կարս տանող բոլոր ճանապարհները, հույս ունենալով, որ պաշարվածները հարկադրված անձնատուր կլինեն։ Չնայած սկսված ռովին (պաշարվածները ուտում էին ամեն տեսակի միս «սրրոց և անսրբոց»), նրանք անձնատուր չեն լինում։ Այդ նույն միջոցիս 1855 թ. հուլիսի 20-ին Կարսը պաշարող ռուսական մի զորամաս, փոխարքա Մուրավյովի հրամանատարությամբ, շարժվում է դեպի Բասեն, հարձակվում Քյուփրիկ (Վաղարշավան) կոչվող գյուղում գտնվող 6000-ոց օսմանյան զորաբանակի վրա, հաղթում հակառակորդին, ապա շարունակում արշավանքը դեպի Կարին։ Սակայն օսմանյան բանակի հրամանատարությունը խորամանկում է. խարույկներ է վառում իր զորամասերի վրանների առաջ, ապա ողջ ռազմական ունեցվածքով ու բնակչության հետ միասին, գաղտնի ճանապարհով, հեռանում Կարինից ոչ հեռու գտնվող Ծիրանյա և Բավաբորնիա կոչվող լեռների բարձունքները։

Հետևյալ առավոտ ռուսները մտնում են Կարին, տեսնում քաղաքը դատարկ։ Ստուգելով ու ճշտելով իրողությունը ռուսները կրկին վերադառնում են Կարս[8]։

Պաշարյալներին օգնելու համար օսմանյան հրամանատարության ձեռնարկած միջոցների մասին Օձնեցին գրում է, որ Սուլթանի հրամանով, Օմար փաշայի անմիջական հրամանատարությամբ, երկրի տարբեր մասերից (Տիգրանակերտ, Մալաթիա, Խարբերդ, Տրապիզոն) կամավորներ են ժողովում, կազմում 4000-ոց մի բանակ, որի խնդիրն էր՝ դուրս գալ Սև ծով և Բաթումի վրայով անտառահատ ճանապարհ բանալ դեպի Կարս։

Նախքան օսմանյան այս հավաքածո զորամասերի Կարսի ուղղությամբ շարժվելը, Կարինում լուր է տարածվում ռուսների դեպի Կարին շարժվելու մասին։ Օձնեցին պատմում է, որ այդ երեկո Կարինի օսմանյան զինվորական հրամանատարությունը ընթրում էր կարինի հայ հոգևոր առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսի տանը։ Այդ ժամանակ գալիս է երկրորդ գուժկանը և հայտնում, որ ռուսները մոտեցել են Կարինին։ Երրորդ գուժկանը հայտնում է, թե «ռուսք եկեալ բազմութեամբ զսրաց ընդ փոխարքային Մուրյեւայ դեմ յանդիման բանակին մերոյ, բացեալ զթնդանօթս սպանին զքանի անձինս ի մէնջ և մեք ի նոցանէ։ Վասն որոյ փութացայ խնդրել ի ձենջ օգնականութիւն»[9], սաստիկ խուճապ ու տագնապ առաջանում օսմանյան հրամանատարության մեջ ու զորամասերում։ Այս մասին ականատես Օձնեցին գրում է, որ Գրիգորիս եպիսկոպոսի մոտ ընթրիքի հավաքված Կարինի հատվածի օսմանյան բարձրաստիճան զինվորականությունն ու նահանգապետները, անավարտ թողնելով ընթրիքը, նստում են խորհրդակցության։ Նահանգապետները, իբրև անկանոն զորամասերի հրամանատարներ, ռազմական գործողություններ վարելու համար պահանջում են հրանոթներ, նրանց առարկում են բարձրաստիճան զինվո-

8 Նույն տեղում, էջ 79։
9 Նույն տեղում։

բականները, պատճառաբանելով «մի գուցէ աւարի առցեն ռուսք զթնդանօթս, մանաւանդ թէ չունէին ընդ ինքեանս մարդիկ զօրք թնդանօթաձիգք անկանոնքն»[10]։

Այս տարաձայնությունների հետևանքով Կարինի հատվածում թուրքական զորամասերը պատերազմական գործողություններ չեն սկսում, այլ, խուճապահար բնակչության հետ թողնում են Կարինը, բայց խուճապը դադարում է երբ լուր է ստացվում ռուսների Կարս վերադառնալու մասին։

Վ. Օձնեցին ամեն ջանք գործադրում է Արևելյան Հայաստան անցնելու համար։ Այս նպատակով նա դիմում է պարսից հյուպատոսությանը և կրկին ձեռք բերում պարսից հպատակի անձնագիր։ 1855 թ. հոկտեմբերի 11-ին (հին տոմարով) նա դուրս է գալիս Կարինից և նույն ամսի 16-ին մտնում ռուսական բանակ, որն այդ օրերին Սուսլովի հրամանատարությամբ գտնվում էր Բագրևանդում (Ալաշկերտ), ունենալով 4000 պահապան զորամաս։ Սուսլովն ունկընդրելով Օձնեցուն, նրան է տրամադրում հատուկ ուղեկից և առաջարկում գնալ «ի կարս առ գլխաւոր զօրապետն ռուսաց փոխարքայն Նիկոլայ Նիկոլայևիչ Մուրաւևին»[11]։

Ի դեպ, Կարս տանող ճանապարհին, Թոփրաղ-կալէ կոչված վայրում նա ականատես է լինում հետևյալ ուշագրավ միջադեպին։ Լուսավորչական մի հայ երիտասարդ փախցրել էր իր սիրած աղջկան՝ դավանանքով պապական։ Նրա մայրը աղեկտուր լացով ողբում էր ոչ թե աղջկա, այլ նրա հոգու կորուստը, «զի գնաց ընդ հերձուածող հերետիկոսի»։ Հայտնի է, որ այս ժամանակներում (50-ական թթ.) սրվել էին կաթոլիկ և լուսավորչական եկեղեցիների միջև գոյություն ունեցող գժտությունները։ Նշված փաստը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ այդ գժտությունների արտահայտությունը՝ խավարամիտ ժողովրդի միջև։ Օձնեցին իբրև ժամանակի լայնախոհ մտավորական ափսոսանքով «ավա՜ղ» է կարդում «ընդ տխմար ռամկութիւն նոցա»։

1855 թ. հոկտեմբերի 19-ին Օձնեցին ժամանում է Կարսի մոտ գտնվող Չիթլի-զալայ կոչվող գյուղը, ուր էր Մուրավյովի բանակը։ Նրա ժամանման մասին իսկույն զեկուցում են փոխարքային։ Վերջինս անմիջապես իր մոտ է հրավիրում Օձնեցուն, և թարգմանի՝ Լոռու-Մելիքեանց Տարել Տարելյանի ներկայությամբ հարցափորձ անում «որպիսութենէ և զորքանութենէ պատերազմի և զօրաց օսմանցւոց և զպաշարաց զօրաց Կարսոյ ամրոցի»[12]։ Այս հարցափորձից հետո Մուրավյովը Օձնեցուն հրավիրում է ընթրիքի, որի ընթացքում պատերազմին վերաբերող հարցաղրույցը շարունակվում է։ Այստեղ Մուրավյովը Լոռու Մելիքյանցին ասում է, թե նրա տեղեկություններն ավելի ճշգրիտ են, քան իրենց ունեցած պաշտոնական տվյալները։

Այնուհետև Օձնեցին 16 օր մնում է Մուրավյովի բանակում, հայ բարձրաստիճան զինվորական Թոլմա Դաբրիելի Միրիմանյանի տանը։ Շատ շանցած, նա կրկին հրավիրվում է փոխարքա Մուրավյովի մոտ ճաշկերույթի. վերջինս հայտնում է Օձնեցուն, թե «վասն քո լաւ լուր ստացա», ապա գգուշացնում, որ նախապատրաստված է Օձնեցու հետագա ճանապարհորդությունը։ Նա հետևյալ օրը պետք է մեկներ Թիֆլիս և Վասիլի Հովսեփի Բեհբուդյանցից հանձնարարական նամակ ստանալով՝ գնար Էջմիածին՝ ներկայանալու Ներսես

10 Նույն տեղում, էջ 79։
11 Նույն տեղում, էջ 81։
12 Նույն տեղում, էջ

Աշտարակեցի կաթողիկոսին։ Խիստ սկներև է ռուսական բարձրաստիճան դինվորականության ցուցաբերած առանձնակի ուշադրությունը Օձնեցու նկատմամբ։ Այս առումով բնորոշ է հետևյալ փաստը։ Ռուսական հրամանատարությունը միաժամանակ զգուշացնում է Երևանում գտնվող Արսեն Գեղամյանին, որ եթե կաթողիկոսը Տաճկաստան փախչելու համար որոշի պատժել Օձնեցուն. ապա այդ մասին անմիջապես տեղյակ պահեն իրեն[13]։

Կովկասյան հրամանատարության արտակարգ ուշադրությունը Օձնեցու նկատմամբ առաջին հերթին պետք է բացատրել Օձնեցու ռուսական անվերապահ կողմնորոշման փաստով, ինչպես և այն ծառայություններով, որ մատուցում էր Օձնեցին ռուսական հրամանատարության՝ թուրքական ռազմական ուժերի վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ հաղորդելով։

* * *

Վերը շարադրվածից հայտնի է դառնում, թե որքան լավատեղյակ էր Վ. Օձնեցին արևելյան պատերազմի կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած գործողություններին։ Ուստի, բնական ու տրամաբանական պետք է համարել այն, որ նա ձեռնամուխ է լինում շարադրելու «Յաղագս պատճառանաց բացման պատերազմին ռուսաց ընդ օսմանցիս» աշխատությունը։ Ենթադրվում է, որ նշված աշխատությունը գրված պետք է լինի պատերազմի ավարտից շատ ավելի ուշ։ Օձնեցու աշխատությունը, թեև անավարտ, բայց որոշակի հետաքրքրություն է ներկայացնում։ Այն գրված է պատմական իրողության օբյեկտիվ ընկալումով և սխալված չենք լինի եթե ավելացնենք, որ որոշ առումով աշխատությունը այժմեական հնչեղություն ունի։

Վարդան Օձնեցին իր այս փոքրածավալ աշխատության մեջ անդրադարձել է Ղրիմի պատերազմի հանրահայտ շատ երևույթների։ XIX դարի 50-ական թվականներին՝ ցարական Ռուսաստանի արևելյան քաղաքականությանը, նրա դիվանագիտական բանակցություններին՝ եվրոպական մեծ տերությունների հետ, Մենշիկովի միսիայի գործողություններին Կոստանդնուպոլսում, Անգլիայի ու Ֆրանսիայի դաշնակցությունը Թուրքիայի հետ՝ ընդդեմ Ռուսաստանի, օսմանյան կառավարության երկդիմի քաղաքականությանը՝ կայսրության սահմաններում բնակվող քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ և այլն։

Այս ամենից, սակայն, մեր կարծիքով, ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայերի նկատմամբ օսմանյան կառավարության բռնած դիրքը, որի մասին հիշողություններ է թողնում դեպքերի ժամանակակից Վ. Օձնեցին։ Այսպես, նա գրում է, որ Անգլիայի ու Ֆրանսիայի թելադրանքով օսմանյան կառավարությունը հատուկ հրովարտակով դիմում է իր հպատակ քրիստոնյա ժողովուրդներին, խոստանալով նրանց կյանքի ու գույքի լիակատար ապահովություն[14]։

Ժամանակի արևմտահայ պարբերականներում հաղորդագրություններ են տպագրվել այդ փաստաթղթի մասին։ Սուլթանի հրովարտակը աղդարարում է. «Եվ այս տերութեանց դեսպանները մասնաւորապէս իբրև երևսփոխանէ ծովային տերութեանց երևելի ապացոյցներ տուին իրենց բարեհաճութեանը և իրենց դիտաւորութեանը նպաստամատոյց ըլլալու վեհափառ Սուլթանին իշ-

13 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 8822, էջ 82։

14 Նույն տեղում, էջ 190։

խանութեանը իրենց ամեն զորութեամբը»[15]։ Նույն հրովարտակում օսմանյան կառավարության կողմից ասվում ու պահանջում է մահմեդականներից ու քրիստոնյաներից, սիրով ու խաղաղությամբ ապրել միմյանց հետ, որ բացառվի թշնամությունն ու ատելությունը միմյանց նկատմամբ, որ Բարձր դռան հպատակները երկպառակություն չսերմանեն և յուրաքանչյուրը զբաղվի իր գործով։ Սույն հրովարտակն ավարտվում է խիստ պաշտոնական ու շեշտվում նրա հավաստի լինելու հանգամանքը։ Այսպես, օրինակ, «Արշալույս Արարատեան» լրագրի 1853 թ. № 147-ում գրված է, որ այդ կարգադրություններն անող ժողովը գումարվել է բարձրագույն իշխանության ներկայացուցչի հրավերով ու վերջինիս նախագահությամբ, որին մասնակցել են երկրի բարձրաստիճան պաշտոնյաները՝ մինիստրներն ու արդարադատության բարձրագույն ժողովի անդամները, ինչպես նաև Շեյխ իսլամն ու յուլեյմանները[16]։ Շեշտված է նաև, որ նրանք, որոնք այդ ժողովի որոշումները կփորձեն անտեսել, կհամարվեն ոճրագործներ և կպատժվեն օրենքի խստագույն չափերով[17]։

Արևմտահայ իրականությանը հուզող այս հրովարտակին հաջորդում է օսմանյան կառավարության ներկայացուցչի այցը հայոց պատրիարքին։ Այս մասին «Մասիս» լրագրի էջերում կարդում ենք. «Ժամանակ մը ի վէր տաճկաց ստորին կարգի ժողովրդեան մէջ ազգերնուս վրայով խել մը անհիմն խոսքեր կը պտըտին, որոնք երբեմն սպառնալիքներու և մանր մունր անկարգութիւններու առիթ կուտան։ Ուրախութեամբ կը ծանուցանենք, որ կայսերական բարեխնամ կառավարութիւնը ասոնց առաջքը առնելու հարկաւոր եղած միջոցները տնօրինեց, և կիրակի օրը յատկապէս տեսչութեան պաշտոնեայ վսեմափայլ Ռայրէդտին փաշա ամենապատիւ սրբազան պատրիարգ հօր այցելութեան երթալով՝ դրան ըրած գովելի տնօրինութիւնը անօր յայտնեց յանձնորութիւն սրտի բարեմիտ հասարակութեան ազգիս»[18]։

Ղրիմի պատերազմի պատմությանը նվիրված այս աշխատության մեջ Օձնեցին հավաստում է, որ օսմանյան կառավարության երկդիմի քաղաքականությունը լիովին խրախուսվում է անգլիական ու ֆրանսիական կառավարությունների կողմից, որոնց դեսպանները 1853 թ. մայիսին Սուլթանին թելադրում են վերոհիշյալ հրովարտակը կազմելու միտքը։ Այդ հարկավոր էր ռուսական կառավարությանը լռեցնելու համար. «Քանզի կայսրն ռուսաց բողոքէր ընդդեմ անկարգութեանց օսմանցւոց և խաբեութեանց նոցա, որք հրապարակաւ խոստանային պահել զօրէնս թանզիմաթի և իրօք ոչ քիչ կատարէին, բաց ի հին բարբարոսական սովորութեան իւրեանց»[19],—գրում է Օձնեցին։

Հիշյալ հրովարտակը տարածելուց հետո օսմանյան կառավարությունը շնորհակալական թղթեր է պահանջում քրիստոնյա հպատակներից, հայերը և հույները գրում են այդ շնորհակալագրերը. այս իրողության մասին մենք տեղեկանում ենք ոչ միայն Օձնեցու պատմությունից, այլև ժամանակի պարբերականներից։ «Արշալույս Արարատեանի»-ի 1853 թ. № 47-ում տպված է ոչ միայն հայերի, այլև հույների շնորհակալագրերի բնագրերը։ Իսկ թե օսմանյան

15 «Արշալույս Արարատեան», 1853 թ., № 447։
16 Մահմեդական օրենսգետ։
17 «Արշալույս Արարատեան», 1853 թ., № 447։
18 «Մասիս», 1853, № 24—73։
19 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 8822, էջ 193։

կառավարությունը քաղաքական առումով, ինչպես է օգտագործում այդ շնորհակալագրերը, դա ակնհայտ է դառնում Օձնեցու աշխատության հետևյալ հատվածից. «Ստիպեաց տալ զթուղթ շնորհակալութեան յինքենէ, որպէս թէ առանց ի գործ ածելոյ տաճկաց զբարբարոսութիւն իւրեանց ճիշտ պահպանեն զօրենս թանզիմաթի, զոր ստացեալ ի հայոց և ի յունաց առաքեաց ի դեսպանաժողովն թագաւորաց ի Փարիզ. որոյ աղաղաւ էր իրաւացի բողոքն կայսէր ռուսաց։ Բայց Սուլթան ձեռնտութեամբ եւրոպացւոց կարաց մարմնատել զբողոք նորա այսու հրապարակաւ»[20]։

Օձնեցու աշխատության մեջ բերված հրովարտակի բնագրին մենք չհանդիպեցինք ժամանակի պոլսահայ մամուլում։ Սակայն այդ փաստաթղթի գոյությունը հավաստվում է մի շարք այլ փաստերով ևս։ Այսպես, պոլսահայերի շնորհակալագրի մեջ ասված է. «...Հայոց ազգին հոգևորականներուն շնորհած կրոնական հատուկ արտոնությունները յուր կայսերական երկրներու մեջ գտնըված եկեղեցականներու և վանորէից և անոնց վերաբերյալ երկրներուն, անշարժ կալվածոց և ուխտատեղերուն հատկացեալ ազատութիւնները և իրաւունքը, ինչպես ասկէ առաջ նույնպես ետքն ալ անխտիր պահելու և պաշտպանութիւնը ընելու վճռողական հրաման տրալ և այս հրամանը ծանուցող հրովարտակը որն որ օգոստափառ ինքնակալին ձեռագրով, վավերացած է, մեր նվաստութեան պատրիարքարանը խրկեց»[21]։

Հավանաբար, հիշյալ հրովարտակի բնագիրը պահպանված է եղել Պոլսի հայոց պատրիարքարանի արխիվում, կամ էլ հետագայում շատ արժեքների հետ միասին չարամտորեն ոչնչացվել է։ Քանի որ Օձնեցու «Յաղագս պատճառանաց բացման պատերազմին ռուսաց ընդ օսմանցիս» ձեռագիր աշխատության մեջ զետեղված է Ղրիմի պատերազմի ընթացքում քաղաքական նկատառումներով Օսմանյան կայսրության կողմից հայերին տրված արտոնությունների վերաբերյալ հրովարտակը, ուստի հարկ ենք համարում հրապարակել Վ. Օձնեցու «Յաղագս պատճառանաց բացման պատերազմին ռուսաց ընդ օսմանցիս», ուր հեղինակը Ղրիմի պատերազմին վերաբերվող շատ ընդհանուր հարցեր շոշափելուց հետո, բերում է նաև արևմտահայերին արտոնություններ շնորհելու Սուլթան Մեճիդի հրովարտակի հայերեն բնագիրը։

ՅԱՂԱԳՍ ՊԱՏՃԱՌԱՆԱՑ ԲԱՑՄԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՌՈՒՍԱՑ ԸՆԴ ՕՍՄԱՆՑԻՍ

գ. Ա

Յորժամ գծով ծածանէր իրրև խաղաղութեան աշխարհի կայսրն ռուսաց Նիկողայոս Ա խորհուրդս խորհէր և որոնէր ընդարձակելոյ զիշխանութիւն իւր ի վերա ամրողջութեան Սեւ ծովու այն է Հելեսպոնտոսի և մասամբ ի վերա միջերկրական ծովու (այն է Սպիտակ ծովն)։ Բանս անկանէ ընդ նախարարս ծովային տերութեանց Եւրոպիոյ, և ինքն կայսրն անձամբ երթայ ի Գերմանիայ և ի Լոնդոն 1852 ամին խօսի ընդ թագուհւոյն Անգղիացւոց, խորհրդածելով ի

20 Մատենադարան, ձեռ. 8822, էջ 193։

21 «Արշալոյս Արարատեան», 1853, № 443։

վերա անկարգութեան և կառավարութեան օսմանեան տերութեան, օրինակ տալով զնոսա հոգևարք ծանր հիւանդի, որ ոչ կարէ ճանաչել զինքն և զայլս։ Վասնորոյ ասէ, պարտ է հոգ տանիլ վասն առողջութեան նորա. եթե ոչ կամաւ ընդունիցի զդեղն առողջարար, արբուցանել պարտ է նմայ զդառն դեղն, զի առողջասցի, առ որ հաւանի և Անզդիոյ թագուհին։ Իսկ օսմանեան պետութիւնն յայնժամ զբաղեալ էր բարեկարգելոյ զելումուտս արդեանց և ծախուց տերութեան իւրոյ, ի տեղիս, տեղիս որք տիրապէտին Արքունի գետնի և հողոց, ի վաղուց հետէ մահմեդական փաշայք բէգազնեայք և աղայ անուանեալքն զամենայն կորզեալ ի ձեռաց նոցա՝ մուծանին ի հաշիւ Արքունի կալուածոց։ Եւ ի հաւուց իւրոց սահմանեալ վարձատրութեան նշանն տերութեան, որ Իւֆտիխար[22] անուն ծանրագին զոհարեղինօք զարդարեալ տուեալ լինէր նախարարաց և գործակալաց իւրոց. փոխէաց զայն նշան յանուն իւր սուլթան Մեճիա («Մէճիտիէ» ի հինգերորդ Աստիճանս բաժանեալ զայն, իւրաքանչիւրն յատուկ արտօնութեամբ, սկսեալ յառաջնորդէն, բայց ոչ որպէս զառաջինն զոհարեղինօք զարդարեալ, այլ թեթևագին ծախիւք, զորս ետուն ի նշանաւոր արանց՝ զհին ծանրագինսն ստանալով ի նոցանէ, ի զանձարանն արքունի, այս եղև ի յուլիս ամսէ 1852 ամի։ Եւ ի սոյն ամի յուլիս ամսուջ անկաւ հրդեհ մեծ ի Սամաթիայ թաղն Կոստանդնուպօլիս, ուր հայոց մեծ մասն բնակեր. այրեաց լափեաց զամենայն տունս, զկրպակս, և զբաղում կարասիս տանց հայոց և տաճկաց, բայց բարեսիրտ Արքայն օսմանեանց և համայն բնակիչք Կոստանդնուպօլսոյ ոչ զանց արարին օգնել դրամով և ինչիւք ի հրդեհէն աղքատացելոցն։

Յետ այսորիկ կայսրն ռուսաց Նիկողայոս զամենայն ինչ պատրաստեալ զպիտոյս պատերազմի առաքե դեսպան ի Կոստանդնուպօլիս զծովապետ նախարարն կնեազ Մէնշիկով, որ ունէր ծովակալութիւն կողմանցն Պոնտոսի, որ եմուտ ի Կոստանդնուպօլիս ի տասն և վեցն փետրվար ամսոյ 1853 յամի։ Մնալով անդ ամիսս երիս, արտաքոյ կարգի քաղքավարութեան, ներկայանայ մեծ եպարքոսին հասարակ հանդերձիւք զգեցեալ զքաղաքական և ապա ի ներկայանալ Սուլթանին ըստ իւրեանց Դաշանց։ Արգելուն զՄենշիկով սուսերամերկ մտանել առ սուլթանն, որ էր ոյցք լինելոյ օսմանեանց ներքոյ սրոյ ռուսաց, առաջարկեաց այնուհետև զպահանջ իւր Սուլթանին տաճկաց. նախ, վասն սուրբ տեղեաց, զի յույնք և լատինք վիճէին վասն Բէդղէհէմի մսրին, ուր ծնաւ Քրիստոս և պաշտպանք հունաց երևէին ռուսք։ Երկրորդ, յունաց եկեղեցւոյ զիրաւունս և զարտոնութիւնս դնել ի ներքոյ երաշխաւորութեան ռուսաց, զի երբեք տուրութիւի օսմանեանց մի խառնեսցի յիրս յունաց եկեղեցւոյ և եկեղեցականաց, և փոխանակ օսմանեանց ռուսք տեսցեն զդատ եկեղեցւոյ և եկեղեցականաց յունաց, այնու պատճառաւ, զի թանզիմաթ անուն օրենսդրութիւնն օսմանեանք՝ ոչ կարէին իսկութեամբ պահել և ի գործ դնել։ Երրորդ, թողուլ ի ռուսս զմասն ծովեզերայ Պոնտոսի, այն է, զլեռնականս Աճարիայի ցնաւահանգիստն Պաթում քաղաքի, ուր անցուցանէին աճարիացիք զգերիս և վաճառէին ծածուկ ի Կոստանդնուպօլիս։ Չորրորդ, թողուլ զՄոլդաւիայ ընդ երաշխաւորութեամբ ռուսաց և միանգամայն լինելով ընդ իշխանութեամբ տերութեան օսմանեանց։ Եւ ըստ այսոցիկ էին մասնաւոր խնդիրներ, զորս պա-

22 Իւֆտիխար — փառքի պատվոնշան։

հանջէին ռուսք, անհոգացեալ բոլորովին ի սադրելոյ Անգղիացւոց։ Հինգերորդ, պահել զճիշտ օրենս Թանզիմաթի։

Եւ յորժամ տարածեցաւ ի Կոստանդնուպոլիս զլուր պահանջմանց կնեազ Մենշիկովի, խռովեցաւ քաղաքն ամենայն բազմացան յայնժամ ի մայրաքաղաքին ժողովք արքունի նախարարաց տաճկաց հոգևորականաց նոցա և համայն ժողովրդոց, և ի բերանոյ հասարակաց լսէր պատերազմ։

Բայց այնուամենայնիւ խոհեմութեամբ ետուն վախճան վիճաբանութեան յունաց ընդ լատինացւոց, վասն սուրբ տեղաց Երուսաղէմի, Թողին յունաց յամենայն, զոր պահանջէին ըստ դրեալ նախնի հրովարտակաց օսմանեան կայսերաց, բաց յաստեղն, զոր լատինք կամէին դնել ի վերա մսրոյ, ուր ծնաւ Քրիստոս Աստուած մեր։

Սակայն դեսպանք գաղիացւոց և Անգղիացւոց զետուն թույլ օսմանեանց կորուսանել զամբողջութիւն իշխանութեան իւրեանց յառաջ բերելով գդաշնադրութիւնս վասն ամբողջութեան օսմանեանց, որ ի 17-ն յուլիսի 1841 ամի։ Ուստուցին նոքա օսմանեանց կրկին սփռել հրովարտակ վասն ճիշտ պահպանութեան Թանզիմաթի օրինաց. ըստ որում և ինքեանք ևս էին այնմ երաշխաւոր, ետուն և պայմանագիր օսմանեանց առանձին վասն օգնելոյ նոցա ընդէմ ռուսաց, գոգոեցին և զհոգևորականս նոցա ընդունել զպահանջ կնեազ Մենշիկովի, որով և բաց առին Մենշիկովին։ Եւ իբրև գիտուց կնեազ Մէնշիկով, թէ ոչ յաջողի գործն իւր բանախօսութեամբ, ի 9 մայիսի այնր ամի դադարեցուցց զյարաբերութիւնն ռուսաց ընդ օսմանցիս և առեալ զՕզերով դեսպան ռուսաց, ելին ի մայրաքաղաքէն, ցուցանելով ի նաւէ անտի հանդէպ պալատուն Արքայի զնշանս պատերազմի դրօշակս զանազանագոյնս, անցան ի կամարն Սևաստապոլ. և անդէն ազդ արարին զամենայն անցս տաճկաստանի Նիկողայոս կայսեր ռուսաց, ի Պետերբուրգ։ Իսկ կայսրն, որ վաղապէս պատրաստեալ ունէր վաթսուն հազար զօրականս ի սահմանս բրուտ գետոյ, հրամայեաց վերստին պայմանաժամաւն հարցանել ի Սուլթանէն վասն զիջանելոյ ի պահանջ ռուսաց, եթէ ոչ խոնարհեսցի նա՝ մղել ի ներքս զվաթսուն հազարս ի սահմանս օսմանեանց, առ որ ի ձեռն արտաքին գործոց պաշտօնեայ տաճկաց ի 17 մայիսի, եթէ ոչ զիջանիցիք ասէ ցութ օր յետ պայմանեալ ժամուն մտանեն զօրք ռուսաց ի սահմանս տաճկաց. տաճիկ ոչ զիջան ի պահանջ ռուսաց և զօրք սոցա 3 յուլիսի մտին ի Մոլդաւիայ, մինչդեռ այսոքիկ գործեին, Սուլթան Միճիտ ընդ խորհրդատուութեան Գաղիու և Անգղիու դեսպանաց, ի 25-ն մայիսի աճապարեալ սփռեաց զսաստիկ հրովարտակս առ քրիստոնեայ և տաճիկ հպատակս իւր վասն ճիշտ պահպանութեան օրինաց Թանզիմաթի[23], որոյ էր վրեժխնդիր կայսրն ռուսաց։ Յորոյ ժողովեաց ի քրիստոնեայ հպատակաց իւրոց զստորագրութիւնս շնորհակալութեան, որպէս և ի Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարգարանի ժողով գրեցաւ ի չորսն յունիս, քանզի կա(յ)սրն ռուսաց բողոքեր ընդդեմ անկարգութեանց օսմանեանց և խաբեութեանց նոցա, որք հրովարտակաւ խոստանային պահել զօրէնս Թանզիմաթի և իրօր և ոչ մի ինչ կատարէին, բաց ի հին բարբարոսական սովորութեան իւրեանց։

Աստ հարկաւոր համարիմ դնել զիսկական պատճէն թարգմանութեան հրովարտակի Սուլթան Մէճիտի, որ գրեաց առ պատրիարգն հայոց Կոստանդնու-

23 Թանզիմաթ — կարգադրություն, նորոգություն։

պոլսոյ և առանձին ստիպեաց տալ զթուղթ շնորհակալութեան յինքենէ, որպէս թէ առանց ի գործ ածելոյ տաճկաց զբարբարոսութիւն իւրեանց, ճիշտ պահպանեն զօրէնս թանզիմաթի։ Զոր ստացեալ ի Հայոց և ի յունաց, առաքեաց ի դեսպանաժողովն թագաւորաց ի Փարէզ, որոյ աղաղաւ էր իրաւացր բողոքն կայսէր ռուսաց։ Բայց Սուլթանն ձեռնտուութեամբ եւրոպացւոց կարաց մարմանդել զբողոք նորա այսու հրովարտակաւ։ Որպէս գրի աստ, ի ներքոյ նշանագրի հրովարտակին, այսինքն (թուռայի) ինքնագիր ձեռամբ գրեալ այսքան բան.

«Այս բարձրագոյն հրամանիս պարունակած վճիռներուս առանց փոփոխութեան մշտնջենաւորապէս և շարունակաբար գործադրութեանը ուշադրութիւն և հակառակը գործելէն զգուշութիւն ըլլայ։ (Ապա սկսանի այսպէս) քրիստոնեայ Ազգին ընտրեալ պարծանք և յիսուսակրօն ժողովրդեան հաւատարիմ գլուխ՝ Պատրիարգ Հայոց Կոստանդնուպոլսոյ և շրջակայից յԱկոբ Արքեպիսկոպոս (որուն Աստիճանը յարատեւեցէ), կայսերական բարձրագոյն հրամանս քեզի հասած ժամանակը յայտ լիցի, որ արդար և ամենաբարերար տերն մեր իւր Աստուածային բարձր շնորհաց և երկնային անհուն բարութեանցը համեմատ իմ կայսերական օգոստափառ անձս տերութեան և իշխանութեան փառացն արժանի ընելով և թագաւորութեան ու խալիֆութեան բարձր աստիճանը հասցնելով (փառք և շնորհ Աստծոյ), այսչափ երկիրներ, քաղաքներ և զանազան կարգէ հպատակներ ազգեր և ծառայէր խալիֆայութեանս արդարակորով ձեռքը իբր հատուկ աւանդ յանձն ըրած ըլլալուն, ինչպէս որ խալիֆայութեան և հրամանատարութեան պարտքն ու կայսերութեան և թագաւորութեան բարձրագոյն սովորութեան հարկն է, կայսերական բարեբաղդ Աթոռը նստելէս ի վեր Աստուածային շնորհաց օգնութեամբ և երկնային բարեաց նպաստիւքը տերութեանս ամէն ազգի հպատակաց կատարեալ պաշտպանութեան և մանաւանդ ինչպես որ ի վաղուց հետէ կլլայ կրօնից և հոգևոր գործոց մեջ անխտիր կատարեալ ազատութիւն ունենալուն մասին, ըստ պահանջման կայսերական ճշմարիտ բարի նպատակացս և բարձրագոյն անկեղծ կամացս միշտ գործնական շնորհքը և կայսերական տերութեանս հարատև հսկողութիւնը արժանապէս ի գործ կը դրվին և ասոր բարի հետևանքը և օգտակար պտուղները միշտ հայտնի կը տեսնուին, բայց անհոգութեամբ կամ զանցառութեամբ հետզհետէ պատահած խելմը չարաչար գործածութիւնները ուրիշ անգամ չի կրկնուելու կերպով բոլորովին վերցնել և անհետ ընելը իմ կայսերական բաղձանացս նպատակը ըլլալով հայոց ազգին մեջ գտնուած տերութեանս հաւատարիմ հպատակաց հոգևորականներուն իմ վսեմախոհ մեծ նախարարացս կողմէն շնորհուած և կայսերութեանս կողմէն ալ հաստատուած հոգևորական յատուկ արտոնութիւնները և կայսերական երկիրներուս մեջ գտնուած եկեղեցիաց, վանորէից և անոնմցէ կախեալ երկիրներուս, անշարժ կալուածոց և ուրիշ կրօնական տեղեաց, և այս տեսակ ուխտատեղեաց և հոգևորականաց յատկացեալ ապատութիւնները և իրաւունքը, վերջապէս, պատրիարգի և առաջնորդեաց վաղեմի պայմանները բովանդակող պէտութիւններուն (հրամանագրերուն) մեջ պարունակուած և գրուած այսպիսի արտօնութիւններուն և թոյլտութիւններուն ամէն ժամանակ անխախտ պահուիլը կայսերական հատուկ կամքս ըլլալուն, այս արքայական բարձրագոյն նպատակս դարձեալ հաստատելով և ծանուցանելով, ասոր ամենևին կերպիւ մը վնաս չի գալուն և ասոր հակառակ վարվողները կայսերական ցասմանս հան-

դիպելիքնին գիտնալնուն համար վճռողական Արքունի հրամանս արդարութեամբ տրուեցաւ և պետք եղած պաշտօնեայներուն ծանուցուեցաւ, որ այս մասին իրենց կողմէն որ և իցէ կերպիւ անհոգութիւն մը պատահելու ըլլայ նէ պատճառանք յառաջ բերելու տեղի չի մնայ։ Այս հրամանիս կատարելապէս և ճշտիւ գործադրութիւնը կայսերական բարձր նպատակս ըլլալը ծանուցանելու և հաստատելու համար Արքունի դիւանէս այս բարձրագոյն հրովարտակը գրուեցաւ։ Դուն որ յիշեալ պատրիարգն ես, եղելութիւնը իմանալուդ պէս միշտ և հանապազ այս կայսերական հրամանիս համեմատ վարուիս ու գործես, ի հակառակը ընելէն զգուշանաս և այս վճռողական որոշմանս դեմ բան մը պատահելու ըլլայ նէ, փութաս անմիջապէս մեր Բարձրագոյն Դռանը իմացնելու։ Այսպէս գիտնաս։ Կայսերական նշանագիրս հաւատ ընծայես։ Գրուեցաւ 1269 շապան ամսոյ վերջը (25 մայիսի 1853 ամի) ի մայրաքաղաքս Կոստանդնուպոլիս»։

Այս հրովարտակ չկարաց ազատելի բամբասանաց զտերութիւնս օսմանեանց, զի բազում անգամ այսպիսեօք առեալ էին զփորձն մեծ տերութիւնքն, վասն այսորիկ և վասն մտանելոյ զօրաց ռուսաց Յուլահ Բուդդան[24], կարգեցին դեսպանաժողով չորս մեծ դաշնակից տերութիւնքն ի Վէյենայ, այն է Ակլիայն, Ֆրանսեան, Աւստրիայն և Բրուսիայն, թերևս կարասցեն խաղաղութեամբ վախճան տալ ծագեալ խռովութեան ի մէջ Ռուսիոյ և օսմանեանց։ Ի ժողովի անդ Անգղիան և Ֆրանսիան, որք ի նորոյ բարեկամացեալ էին, դաշնակցեցան առանձին վասն օգնելոյ օսմանցւոյ և խոտորեցան ի կողմն նոցա, զուր ջանացին Աւստրիայն և Բրուսիայն, վասն բարի վախճանի սկսեալ խռովութեան։ Իբրև ետես Աւստրիան, թէ ոչ ռուսք զիջան ի պահանջից իւրեանց և ոչ օսմանցիք խոնարհեցան, մանաւանդ թէ գտին իւրեանց դաշնակից զԱնգղիայն և զՖրանսիայն, յայնժամ պատրաստեաց զյօթնհարիւրհազար զօրս ի շրջակայ սահմանս տերութեան իւրոյ, խոստացաւ ի դէպ հարկին օգնել զօրօք օսմանեաց, եթէ ռուսք արտաքոյ քան զսահմանն նեղեսցեն զնոսա։ Յաւուրս յայսոսիկ միջամուխ լինէին ռուսք ցգետն Դանուբ և պաշարէին զբերդաքաղաքն Սիլիստրէզայն տեսեալ օսմանցւոց 30 սեպտեմբերի 1853 ամի հրատարակեն զպատերազմս ընդդէմ ռուսաց ի կողմանս Մոլդաւիոյ, Պոնտոսի և Մեծին Հայոց (Կարուց), բաժանեալ զզօրս իւրեանց երիս առաջ՝ ի Պոնտոս, ի Մոլդաւիայ և ի Կարս։ Իսկ ռուսք հետևեալ ամսոյ (29-ն հոկտեմբերի) հազիւ արարին զհրատարակումն իւրեանց կողմանէ։ Բայց յառաջ քան զմի ամիս շարժեալ զոլով զօրք օսմանեանց ի պատերազմ քան զռուսս, մտին ի կողմանէ Մեծին Հայոց ի սահմանս ռուսաց, ի Կարուց անցեալ Ախուրեան գետ, տիրեցին Բայինդուր գիւղին՝ ի մեկն նոյեմբեր և քառասուն հազարաւ բանակ եղեալ նստաւ նոցա անդ զաւուրս 18 սփռեալ անկանոն հեծեալ զօրս իւր ի գիւղօրայս ներքին Շիրակայ գրեթէ կացոյց զամենեսեան յինքեան ի հպատակութիւն։ Եւ խորհէր յարձակիլ ի վերա բերդին Ալէքսանդրապոլու, ուր գտանէր յայնժամ հազիւ զվեց հազար զօրականս։ Սոյնպէս դումարեալ յեզերս Դանուբայ երեսուն հազար՝ ընդդեմ ռուսաց և ի կողմն Պոնտոսի ի Զուրուքսու քսան հազար գումարտակս։ Օսմանցիք ամենայն ուստեքէ սաստակացուցանին զպատերազմն և նուաճին ի ռուսաց ի Շիրակ Մեծին Հայոց»։

---

24 Յուլահ—Բուդդան—Վալախիա—Մոլդավիա. տե՛ս Հ. Ա ն ա ս յ ա ն, «Հովհաննես Կարնեցի, Պատմութիւն պատերազմին Խրիմեան», էջ 84, 88, ծանոթ. 6 և 24, Երևան, 1964։